

ՀՀ քաղաքացի ----- (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և “Թի Բի ԷՄ” Փակ Բաժնետիրական Ընկերությունը, /այսուհետ՝ Կատարող/ ի դեմս տնօրեն Աշոտ Նազարյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի համար, սոցիալական փաթեթի հանգստի ապահովման շրջանակներում, ամրագրել զբոսաշրջային փաթեթ կամ հյուրանոցային կացություն, [www.armhotels.am](http://www.armhotels.am) կայքի ցանկում ընդգրկված կացության օբյեկտներից մեկում:

1.2 Պատվիրատուն պարտավորվում է ընկերությանը վճարել կացության կամ փաթեթի արժեքը, տրամադրել համապատասխան փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ամրագրումը իրականացնելու համար:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**2.1 Կատարողի պարտականությունները.**

2.1.1 Նախատեսված ժամանակահատվածի համար ամրագրել Պատվիրատուի ընտրած կացության օբյեկտը կամ փաթեթը:

2.1.2 Պատվիրատուին տրամադրել կացության օբյեկտների կամ փաթեթի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

2.1.3 Ամբողջական վճարումից անմիջապես հետո տրամադրել Պատվիրատուին Վաուչեր (Կատարողի կողմից ամրագրումը հավաստող փաստաթուղթ):

**2.2 Կատարողը իրավունք ունի.**

2.2.1 Միակողմանիորեն հրաժարվել սույն պայմանագրի կատարումից պատվիրատուի կողմից (նախապես պայմանավորված) վճարումները ժամանակին չկատարելու դեպքում՝ վերջինից պահանջելով կրած ծախսերի և վնասների փոխհատուցում:

**2.3 Պատվիրատուի պարտականություններն են.**

2.3.1 Ժամանակին կատարել բոլոր վճարումները

2.3.2 Ժամանակին տրամադրել համապատասխան փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են փաթեթի կամ հյուրանոցային կացության ամրագրման համար:

**2.4 Պատվիրատուն իրավունք ունի.**

2.4.1 Կատարողից պահանջել ամրագրման վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն:

2.4.2 Նախատեսված ամրագրումից հրաժարվել մեկնումից 3 օր առաջ:

**3. Պայմանագրի գինը**

3.1 Պայմանագրի գինը, ծառայությունները, ծառայության ժամկետները, հաշվարկները և Պատվիրատուի տվյալները նշվում են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող **Հավելված 1-ի** տեղեկանքում

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1 Կատարողը պատասխանատու է միայն Պատվիրատուի կողմից ամրագրված և Վաուչերում նշված ծառայությունների կատարման համար:

4.2 Պատվիրատուի կողմից նախապես ամրագրված ծառայություններից հրաժարվելու դեպքում՝ եթե լրացել է 2.4.2 կետում նշված ժամկետը, Պատվիրատուից գանձվում է կացության կամ փաթեթի առաջին օրվա ամբողջ գումարը:

**5. Անհաղթահարելի ուժ ( ֆորսմաժորային իրավիճակներ)**

5.1 Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ ամբողջությամբ չկատարելու համար, եթե դրանք հանդիսացել են բնական աղետների, արտաքին օբյեկտիվ գործողությունների և անհաղթահարելի ուժի այլ հանգամանքների հետևանք, որոնց համար պայմանագրի կողմերը պատասխանատու չեն և ի վիճակի չեն վերացնել դրանք:

**6. Վեճերի լուծում**

6.1 Կողմերի միջև ծագող բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, մեկամյա ժամկետում: Կողմերի միջև ծագող բոլոր վեճերը և տարաձայնությունները բանակցային ճանապարհով լուծելու անհնարինության դեպքում, դրանք լուծվում են օրենքով սահմանված կարգով:

**7. Եզրափակիչ դրույթներ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում մինչև վերջնաժամկետի օրը:

7.2 Սույն պայմանագրով կատարողի և պատվիրատուի չնախատեսված իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

7.3 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն դեպքում, եթե դրանք կատարված են լրացուցիչ համաձայնագրով, գրավոր և ստորագրված կողմերի կողմից:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

**8. Կողմերի տվյալները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պատվիրատու	Կատարող
Անուն Ազգանուն	«Թի Բի ԷՍ» ՓԲԸ
Հասցե`	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 54/Գ
Անձնագրի տվյալներ`	“ԱՐԱՐԱՏԲԱՆԿ” ԲԲԸ
Քաղաքացիություն`	ՀՀ 1510009338700200
	ՀՎՀՀ` 00260547
	Տնօրեն Աշոտ Նազարյան

-----  
(ստորագրություն)

-----  
(ստորագրություն)

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Փոխանցումը կատարվում է Տեղեկանքի հիման վրա, համաձայն ՀՀ Կառավարության 27.12.2012 Ն-1691Ն որոշման Հավելված 1, 4-րդ գլուխ, կետ 20-ի

Վայրը (մարզ, քաղաք, գյուղ)	
Տնողությունը (գիշերների քանակը)	
Կացության օբյեկտի անվանումը	
Ամրագրված սենյակի տիպը և կարգը	
Սենյակում հյուրերի թիվը	
Ժամանման օր և ժամ	
Մեկնման օր և ժամ	
Սնունդ	
Այլ	
Կացության մեկ գիշերվա արժեքը	
Ընդհանուր Գումար	

**Վճարման ենթակա ընդհանուր գումարը –**

**Կողմերի տվյալները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պատվիրատու	Կատարող
Անուն Ազգանուն	«Թի Բի ԷՍ» ՓԲԸ
Հասցե`	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 54/Վ
Անձնագրի տվյալներ`	“ԱՐԱՐԱՏԲԱՆԿ” ԲԲԸ
Քաղաքացիություն`	ՀՀ 1510009338700200
	ՀՎՀՀ` 00260547
	Տնօրեն
	Աշոտ Նազարյան

-----  
(ստորագրություն)

-----  
(ստորագրություն)